ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 մայիսի 2023 թվականի N 118-Ա

ԼԻԱՆՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ «ԱՐԶԱԿԱՆԻ Խ. ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 6-րդ մասերի, Աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, 111-րդ հոդվածի 2-րդ մասի և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի N 181-Ն որոշման հավելվածի 4-6-րդ կետերը, 2023 թվականի ապրիլի 28-ի N 01/14/02638-2023 գրավոր ծանուցումը՝ **որոշում եմ.**

1. ***Լիանա Գրիգորի Գրիգորյանին*** 2023 թվականի մայիսի 8-ից ազատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Արզականի Խ. Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնից՝ լուծելով նրա հետ 2018 թվականի մայիսի 8-ին կնքված N 93 աշխատանքային պայմանագիրը:

2. Մինչև մրցույթի արդյունքում ընտրված տնօրենի նշանակվելը՝ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Արզականի Խ. Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնակատար նշանակել կազմակերպության տնօրենի ուսումնական աշխատանքի գծով տեղակալ ***Նաիրա Թելմանի Ղազարյանին***:

3. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպել և անցկացնել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Արզականի Խ. Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության հանձնման-ընդունման աշխատանքները և ներկայացնել համապատասխան արձանագրություն:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ա. ՍԱՀԱԿՅԱՆ

2023 թվականի մայիսի 08
ք. Հրազդան